

Մարատովի նահանգապետն ընդունել է Գեղարքունիքի մարզպետի գլխավորած պատվիրակությանը, ստորագրվել է հուշագիր

24.11.2017

Նոյեմբերի 24-ին Ռուսաստանի դաշնության Մարատովի երկրամասի նահանգապետի հրավերով Մարատով քաղաքում գտնվող Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանի գլխավորած պատվիրակությանն ընդունել է նահանգապետ Վալերի Ռադանը:

Հանդիպման մեկնարկում նահանգապետ Վ. Ռադանը շնորհակալություն է հայտնել Կարեն Բոթոյանին հրավերն ընդունելու համար, հավելելով, որ դեռևս հոկտեմբեր ամսին Հայաստան կատարած այցի ընթացքում Կարեն Բոթոյանի հետ ստորագրված երկու մարզերի համագործակցության հուշագիրը լայն հնարավորություններ է ստեղծում երկու սուբյեկտների միջև փոխշահավետ համագործակցություն սկսելու համար:

Պատասխան խոսքում Կարեն Բոթոյանը շնորհակալություն է հայտնել Մարատովի երկրամասի նահանգապետին ջերմ ընդունելության համար, հայտնելով նախանշված ոլորտներում ակտիվ փոխգործակցություն ծավալելու իր վճռականության մասին:

Քննարկումների առանցքում եղել են մասնավորապես մշակույթի, զբոսաշրջության, գյուղատնտեսության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության հեռանկարները: Երկուստեք հետաքրքրություն է ցուցաբերվել երկկողմանի առաջարկներն ավելի մասնագիտական քննարկման ենթարկելու նպատակով ապագայում աշխատանքային խումբ ստեղծելու հարցում: Կողմերը կարևորել են երկկողմանի հարաբերությունները զարգացնելու գործում Մարատովի երկրամասի հայ համայնքի դերը:

Հանդիպման ավարտին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Մարտունի քաղաքներն ի դեմս քաղաքապետեր Արամ Հարությունյանի և Արմեն Ավետիսյանի, համագործակցության հուշագրեր են ստորագրել Մարատովի երկրամասի համապատասխանաբար Կրասնի Կուտ և Վոլսկ քաղաքների իրենց գործընկերների հետ:

Այցի ընթացքում նախատեսված են հանդիպումներ հայ համայնքի ներկայացուցիչների հետ, Կարեն Բոթոյանը ներկա կգտնվի նաև համայնքի կողմից կազմակերպված «Միշտ հին ու նոր իմ Հայաստան» խորագիրը կրող համերգին, որը կազմակերպվում է երկրամասում հայկական մշակույթի օրերի շրջանակներում: